ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք, ՀՀ Արարատի մարզ, գ.Գեղանիստ 8փող. 4, Հեռ. (093)706310 , gexanist-hamaynq@mail.ru

N 057/113
13 դեկտեմբերի 2017թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ԿԻՑ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 28-Ն,29-Ն,30-Ն,31-Ն,32-Ն,33-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ:

ԱՌԴԻՐ 11 ԷՋ:

Համայնքի ղեկավար՝ Վաչիկ Ադիլխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
22, Արարատի մարզ, գ Գեղանիստ, (093)706310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2017 թվականի N 28-Ն

ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.12.2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Հաստատել Գեղանիստ համայնքի 07.12.2017 թվականի Թիվ 12 նիստի հետևյալ օրակարգը

1. Գեղանիստ համայնքի 2018թ-ի համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին
2. 2018 թվականի համայնքի ղեկավարի վարձատվության չափի սահմանման,համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի,հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին
3. << Հայանիստի միջհամայնքային միավորում>> համայնքների միության անդամավճարի փոփոխություն կատարելու մասին
4. Փոփոխություն համայնքի 2017 թվականի բյուջեում
5. Գեղանիստ համայնքի երրորդ եռամսյանկի եկամուտների կատարողականի և ծախսերի կատարողականի հաղորդման մասին

Կողմ -9 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱԲԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԲԱԲԱՅԱՆ ԵՎՐԵՄ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՎԼՈՎ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՏԵՓԱՆ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
9. ՏՈՒԱԶԱՆՅԱՆ ԳԱՍՊԱՐ

Համայնքի ղեկավար Վաչիկ Ադիլխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
22, Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (093)706310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2017թվականի N 29-Ն

ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18,19 կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» 11 և 12 հոդվածների պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնքում 2018 թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝15000 (տասնհինգ հազար)դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 (երեսուն հազար) դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 (հարյուր հազար) դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 (երեք հազար) դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝5000 (հինգ հազար) դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝3000 (երեք հազար) դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն

ընդգրկող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝5000 (հինգ հազար) դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝200000 (երկու հարյուր հազար) դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝60000 (վաթսուն հազար) դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝50000 (հիսուն հազար) դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 (վեց հազար) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 (տասնմեկ հազար) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 (տասնչորս հազար)դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝21000 (քսանմեկ հազար) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝45000 (քառասունհինգ հազար) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝100000 (հարյուր հազար) դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 (վեց հազար) դրամ.,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 (տասնմեկ հազար) դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝14000 (տասնչորս հազար)դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 (քսանմեկ հազար) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 (քառասունհինգ հազար) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 (հարյուր հազար) դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝50000 (հիսուն հազար)դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 (հարյուր հազար)դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝500000 (հինգ հարյուր հազար) դրամ,

դ. խաղատների համար՝1 000 000 (մեկ միլիոն) դրամ,

ե. շահումով խաղերի համար՝500000 (հինգ հարյուր հազար) դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 (չորս հազար) դրամ
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 (վեց հազար) դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝15000 (տասնհինգ հազար) դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 (քսան հազար) դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 (երեսուն հազար) դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 (մեկ հազար)դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 (երկու հազար) դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 (չորս հազար) դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝8000 (ութ հազար) դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր անիս մեկ քառակուսի մետրի համար

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝2000 (երկու հազար) դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 (զրո) դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝100000 (մեկ հարյուր հազար) դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝10000 (տասը հազար) դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000 (հինգ հարյուր հազար) դրամ.

2. Որոշման 1-17 կետերի համար կիրառել 0.5 գործակից:

Տեղական վճարներ

Համայնքի տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը

1. Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ
2. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցություններ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝2000 դրամ
3. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու,շինարարության ավարտը փաստագրելու համար համայնքապետարանի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝5000 դրամ:

4) համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար ամսեկան՝
ա. աղբահանության վճարը 1 անձի համար սահմանել՝ 100 դրամ
բ. իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող՝ -- առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների համար աղբահանության վճարը սահմանել՝ 25 դրամ -- արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների հասարակական տարածքների ընդհանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ աղբահանության վճարը սահմանել՝ 6 դրամ, -- կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների մեկ քառակուսի մետրի համար՝ 2 դրամ

5) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման
գումարի չափով՝5000 դրամ
ա.Գեղանիստ համայնքի երեխաների համար 1 ամսվա համար
5000դրամ
բ. Հարևան համայնքներից Գեղանիստի մանկապարտեզ հաճախող 1 երեխայի համար ծնողական գումարի ամսեկան վարձի չափը սահմանել 8000 դրամ:

6)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ

7) համայնքի տարածքում բոլոր հարկ վճարողների համար սահմանել տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՐԱԲԱՅԱՆ ԵՓՐԵՄ
4. ԳԵՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՏԵՓԱՆ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՍԻՆԱ
9. ՏՈՆԱԿԱՆՅԱՆ ԳԱՍՊԱՐ

Համայնքի ղեկավար՝ Վաչիկ Ադիլխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (093)706330 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2017 թվականի N 30-Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետերով՝

Հաստատել համայնքի ղեկավարի վարձատվության չափը 300 000 դրամ

Հաստատել Գեղանիստի համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետայինհիմնարկների աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ 1 դրույք 191 000 դրամ
Համայնքի ղեկավարի խորհրդական և մշակույթի տան տնօրեն՝ 1 դրույք 192 000 դրամ
Աշխատակազմի քարտուղար՝ 1 դրույք 192 000 դրամ
Գլխավոր հաշվապահ՝ 1 դրույք 190 000 դրամ
Առաջատար մասնագետ՝ 1 դրույք 160 000 դրամ
1-ին կարգի մասնագետ՝ 1 դրույք 154 000 դրամ
2-րդ կարգի մասնագետ՝ 1 դրույք 152 000 դրամ
Տեխնիկական անձնակազմ՝
Օպերատոր՝ 1 դրույք 115000 դրամ
Պահակ՝ 1.5 դրույք 113000 դրամ
Հավաքարար՝ 1 դրույք 87000 դրամ
Ընդամենը 1 846 000 դրամ, 11 հաստիքային միավոր:

Հաստատել մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը նպաշտոնային դրույքաչափերը. 15 հաստիքային միավոր

1.Տնօրեն՝ 1 դրույք 160 000 դրամ
2.Դաստիարակ՝ 1 դրույք 100 000 դրամ

3.Դաստիարակ՝ 1 դրույք 77 904 դրամ
4.Դաստիարակ՝ 0.5 դրույք 77 904 դրամ
5.Հաշվապահ՝ 0.5 դրույք 90 000 դրամ
6.Խոհարար՝ 1 դրույք 77 904 դրամ
7.Դաստիարակի օգնական՝ 1 դրույք 77 904 դրամ
8.Տնտեսվար՝ 0.5 դրույք 77 904 դրամ
9.Դռնապահ-ցերեկային պահակ՝ 1 դրույք 77 904 դրամ
10.Գիշերային պահակ՝1 դրույք 77 904 դրամ
11.Երաժշտություն դաստիարակ՝ 0. 5 դրույք 77 904 դրամ
12.Խոհարարի օգնական՝ 0.5դրույք 77 904 դրամ
13.Դաստիարակի օգնական՝ 1 դրույք 77 904դրամ
14.Բուժքույր՝ 0.5 դրույք 77 904 դրամ
15.Գործավար 0.5 դրույք 77 904 դրամ

Ընդամենը 1 284 848 դրամ, 15 հաստիքային միավոր:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵ
2. ԲԱԲԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԲԱԲՅԱՆ ԵՓՐԵՄ
4. ԳԵՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՏԵՓԱՆ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ
9. ՏՈՆԱԿԱՆՅԱՆ ԳԱՊՈՒՐ

Համայնքի ղեկավար Վաչիկ Ադիլխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
22. Արարատի մարզ. գ.Գեղանիստ, (093)706310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2017 թվականի N 31-Ն

<<ՀԱՅԱՆԻՍՏԻ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 24 կետի պահանջներով և առաջնորդվելով <<Հայանիստի միջհամայնքային միավորում>> համայնքների միության 09 դեկտեմբերի 2016թ-ի թիվ 05 որոշումով և միության 6.6 կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գեղանիստ համայքի անդամավճարը <<Հայանիստի միջհամայնքային միավորում>> համայնքների միության կանոնադրության 6.6 կետի սահմանել 35 /երեսունհինգ/ ՀՀ դրամ մեկ շնչի հաշվով:

Կողմ -9 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԲԱԲԱՅԱՆ ԵՓՐԵՄ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՎԼՈՎ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՄՈՒՇՈՒՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ
9. ՏՈՆԱԿԱՆՅԱՆ ԳԱՍՊԱՐ

Համայնքի ղեկավար՝ Վաչիկ Ադիլխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (093)706310 բջջային hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2017 թվականի N 32-Ն

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գեղանիստ համայնքի վարչական բյուջեի 11.1.2(պահուստային ֆոնդ) ծրագրի 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից պակասեցնել 180 000(մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:
2. Ավելացնել Գեղանիստ համայնքի վարչական բյուջեի 01.3.3 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) ծրագրի 4819 (նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածին 180 000(մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:
3. Գեղանիստ համայնքի ֆոնդային բյուջեի 01.6.1(ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ծրագրի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից պակասեցնել 234 000(երկու հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ:
4. Ավելացնել Գեղանիստ համայնքի վարչական բյուջեի 09.8.1(կրթություն այլ դասերին չպատկանող) ծրագրի 5113 (շենք և ծիևությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին 234 000(երկու հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ:
5. Գեղանիստ համայնքի վարչական բյուջեի 11.1.2(պահուստային ֆոնդ) ծրագրի 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից պակասեցնել 1 000 (մեկ հազար) ՀՀ դրամ:
6. Ավելացնել Գեղանիստ համայնքի վարչական բյուջեի 01.6.1(ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ծրագրի 4215 (ապահովագրական ծախսեր) հոդվածին 1 000(մեկ հազար) ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Չեղյալ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԲԱԲԱՅԱՆ ԵՓՐԵՄ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՏԵՓԱՆ

8. ՎԱՐՈՒՆՅԱՆ ԱԼԻՍԱ

9. ՏՈՒՄԱՍՅԱՆ ԳԱՍՊԱՐ

Համայնքի ղեկավար՝ Վաչիկ Ադիլխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
22. Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (093)706310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2017 թվականի N 33-Ն

ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱՆԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԵՎ ՇԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ընդամենը փարտական բյուջեի՝

1.Եկամուտներ՝ 63 185 500դրամ պլանով,փաստացի՝ 47 654 000դրամ,կատարման տոկոսը պլանի նկատմամբ 75.4 %:

2.Ծախսեր՝ 63 185 500 դրամ պլանով,փաստացի՝ 30 917 800 դրամ,կատարման տոկոսը պլանի նկատմամբ 48.9%:

Ընդամենը ֆոնդային բյուջեի՝

3.Եկամուտներ՝ 26 953 400 դրամ պլանով,փաստացի՝ 28 629 900 դրամ,կատարման տոկոսը պլանի նկատմամբ 106.2 %:

4.Ծախսեր՝ 26 953 400 դրամ պլանով,փաստացի՝ 5 389 900 դրամ,կատարման տոկոսը պլանի նկատմամբ 20.0 %:

Ընդամենը՝ 2017 թվականի բյուջե՝

1.Ընդամենը՝ բյուջեի եկամուտներ՝ 90 138 900դրամ պլանով,փաստացի՝ 76 283 900 դրամ,կատարման տոկոսը պլանի 84.6%:

2. Ընդամենը՝ բյուջեի ծախսեր՝ 90 138 900 դրամ պլանով,փաստացի՝ 36 307 700 դրամ,կատարման տոկոսը պլանի 40.3 %:

Կողմ -9 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԲԱՐԱՅԱՆ ԵՎԳԵՆԻ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՍԱՆՈՒԿՅԱՆ ՍՏԵՓԱՆ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ
9. ՏՈՆԱԿԱՆՅԱՆ ԳԱՍՊԱՐ

Համայնքի ղեկավար Վաչիկ Ադիլխանյան